



ինչ
հմմ
Հե՞յ, բա՛ց աչքերդ, դու ընչի շատ ծանոթ կթվաս, մենք էլի հանդիպե՞լ ենք:
Չէէէ երևի շփոթում եմ
Իսկ Դուք կկատարե՞ք իմ երազանքը:
Ինչ գտան...
Ես սիրուն շենք կըսարքեմ, ու դու կըդրվիս քաղաքի ամենաերևացող մասը: Ու էդ շենքը կնվիրեմ աղջկաս:


Մնաց վերջին դետալն ու շենքը կեղնի ամենա - -յուրահատուկը քաղաքում:
Շենքս պատրաստ է:
Այ հմի վերջ:


ARARAT
ARARAT
Հասրաթ դուրդ կուգա:
Շենքին լավ կրնայես:
Անպայման, պապ ջան:


իմն է
BOOM!
Չէ՛ իմն է!
Օգնեք
հէյ
SOS


Հա, մենք կօգնենք, եթե դու էլ մեզ օգնես ու օթևան դառնաս մեզ համար:
Մենք գիտենք քո պատմու- թյունը, գիտենք որ շատ դժվա- րություններ ես տեսել, բայց մենք կօգնենք քեզ:
Հետաքրքիր է, սիրուն է: Բայց էդ շենքից ընչի ի՞նչ օգուտ:






Հոգատար մարդի՛կ,

Ես դիմում եմ ձեզ: Օժիտի շենքը մեզ համար պատմամշակութային արժեք է, իսկ Գյումրու համար՝ կոլորիտ: Շենքը կառուցվել է 1890-ականներին, քաղաքում հայտնի մեծահարուստ և բարերար Լևոն Դրամփյանի կողմից: Նա այս շքեղ շինությունը, որպես հարսանեկան օժիտ, նվիրել է աղջկան՝ Ջավահիր Դրամփյանին: Հենց այս պատճառով էլ գյումրեցիներն առ այսօր այն անվանում են «Օժիտի շենք»:

1988 թվականի երկրաշարժի հետևանքով թեև շինությունը չի փլուզվել, բայց դարձել է վթարային՝ թափվել են պատշգամբի քարերը, որոշ հատվածներում առաջացել ճաքեր: Շենքը նաև շատ խոնավ է: Այստեղ հիմա միայն մեկ ընտանիք է ապրում և փորձում խնամել շինությունը: Բայց շենքն ունի մեր բոլորի ուշադրության ու խնամքի կարիքը, քանի որ այն բոլորիս ժառանգությունն է:

Եկե՛ք մեր օժիտին տեր կանգնենք ու մեր սիրունատեսքաղաքն անօժիտ չթողնե՛նք: